ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Էրազմուս+ ազգային գրասենյակի (NEO) համակարգողի թափուր տեղի

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, «Գիտության և նորարությունների գործընկերությունների աջակցության կենտրոն» հիմնադրամը, Հայաստանում ԵՄ պատվիրակության և Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (Գործակալություն) հետ համագործակցությամբ մեկնարկում են ԵՄ Էրազմուս+ ազգային գրասենյակի համակարգողի թափուր աշխատատեղի համար մրցույթ.

ԵՄ Էրազմուս+ ծրագրի մասին

Էրազմուս+ ծրագիրը (Ծրագիր) Եվրոպական միության ծրագիր է, որը միտված է աջակցելու կրթության, վերապատրաստման, երիտասարդության և սպորտի ոլորտներին: 2021-2027 թվականների աշխատանքային ծրագրի թիրախային ուղղություններն են՝ սոցիալական ներառականությունը, կանաչ ու թվային փոխակերպումները և երիտասարդների մասնակցության խթանումը ժողովրդավարական գործընթացներում: Ծրագիրն աջակցում է Եվրոպական կրթական տարածքում, թվային կրթության գործողությունների ծրագրով և Հմտությունների եվրոպական օրակարգով սահմանված առաջնահերթություններին և գործողություններին:

Էրազմուս+ ծրագիրը նաև նպատակ ունի խթանելու համագործակցությունը ամբողջ աշխարհում գործընկեր երկրների հետ փոխգործակցության միջոցով:

Էրազմուս+ ազգային գրասենյակները Ծրագրի իրականացման հարցերում աջակցում են Եվրոպական հանձնաժողովին, Գործակալությանը և երրորդ երկրների պետական մարմիններին: Գրասենյակների լիազորությունների շրջանակը ներառում է Էրազմուս+ գործողությունների միջազգային բաղադրիչի աջակցությանը, խթանմանը և տարածմանն ուղղված միջոցառումները:

Ծրագրի մասին լրացուցիչ տեղեկություններ կարելի է ստանալ հետևյալ հղմամբ՝

http://ec.europa.eu/programmes/erasmus-plus/index_en.htm:

Աշխատանքի նկարագրությունը.

Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված թեկնածուն կնշանակվի ԵՄ Էրազմուս+ ազգային գրասենյակի համակարգողի պաշտոնում: Համակարգողը պատասխանատու է հետևյալ գործողությունների իրականացման և համակարգման համար.

- Էրազմուս+ ծրագրի խթանում, տեղեկատվության տարածում և մասնակցությանն աջակցություն՝ ներառյալ տեղեկատվական արշավների կազմակերպումը, առաջիկա մրցույթների և հայտերի ներկայացմանն կայքէջի վարումը, տեղեկատվական նյութերը և այլ միջոցառումներ.
- Աջակցություն և խորհրդատվություն Էրազմուս+ ծրագրի շահառու անհատներին և կազմակերպություններին՝ ներառյալ թիրախային խորհրդատվությունների և վերապատրաստման դասընթացների կազմակերպումը մրցունակ հայտադիմումների պատրաստմանն աջակցության նպատակով, ինչպես նաև ԵՄ հատուկ թեմաներով անցկացվող ծրագրերին նվիրված թեմաների վերաբերյալ.
- Էրազմուս+ ծրագրի արդյունքների տարածում և դրանց կիրառում՝ ներառյալ արդյունքերի կիրառմանը նպաստող միջոցառումների իրականացում, Գործակալությանը, Հայաստանում ԵՄ առաքելությանը ուսումնասիրությունների, վիճակագրության, զեկույցների պատրաստման համար կրթության, վերապատրաստման, երիտասարդության և սպորտի ոլորտներին առնչվող տեղեկատվության տրամադրում.
- Բարձրագույն կրթության ոլորտի խնդիրների ուսումնասիրություն և Էրազմուս+ բարձրագույն կրթության բարեփոխումների փորձագետների (HEREs) գործունեության կազմակերպում՝ ներառյալ զեկույցների և փաստաթղթերի նախագծերի մշակում, ինչպես նաև

բարձրագույն ուսումնական հաստատություններում իրականացվող նախագծերի կատարման և դրանց ընթացքի մասին հաշվետվությունների պատրաստում.

- Էրազմուս+ գրասենյակի ղեկավարում՝ ներառյալ տեխնիկական և վարչական անձնակազմի կառավարումը, բյուջեին մշտադիտարկումը, ֆինանսական հարցերին հետևելը, Գրասենյակի գործունեության հաշվետվությունների կազմումը.
- Համակարգում՝ ներառյալ համագործակցությունը և հաշվետվությունների ներկայացումը Գործակալությանը, ԵՄ պատվիրակությանը և ազգային մարմիններին, ինչպես նաև արդյունավետ աշխատանքային հարաբերությունների հաստատումը Էրազմուս+ Գործընկեր երկրների համակարգող գրասենյակների և Ծրագրին մասնակից երկրներում Էրազմուս+ ազգային գործակալությունների հետ:

Թեկնածուին ներկայացվող պահանջները.

Նվազագույն չափանիշներ

- Համապատասխան բարձրագույն կրթության որակավորման աստիճան (նախընտրելի է գիտության թեկնածուի աստիճանի առկայությունը),
- ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագրերի, նախընտրելի է Էրազմուս+ ծրագրի լավ իմացություն,
- կրթության և վերապատրաստման ոլորտներում աշխատանքային փորձ ազգային համակարգում կամ միջազգային կազմակերպություններում,
- Միջազգային ծրագրի կառավարման և համակարգման փորձ,
- Թիմի կառավարման/ համակարգման փորձ,
- Անգլերեն և հայերեն հաղորդակցության գերազանց հմտություններ:

Կարևոր պահանջներ.

- առաջնահերթությունները կառավարելու կարողություն,
- տեղական միջավայրի լավ իմացություն հետևյալ ոլորտներից առնվազն մեկում՝ բարձրագույն կրթություն, մասնագիտական կրթություն և վերապատրաստում, սպորտի և երիտասարդության ոլորտներ,
- վերլուծական, հաղորդակցության, նախագծերի պատրաստման և հաշվետվությունների մշակման հմտություններ,
- հիմնավորված մոտիվացիա և հանձնառություն,
- համակարգչային ծրագերի լավ իմացություն (word, excel, power point);
- պատրաստակամություն ճանապարհորդելու երկրի ներսում և, երբեմն, երկրից դուրս,
- ԵՄ այլ լեզվի իմացությունը ցանկալի է:

Դիմելու կարգը

Թեկնածուները պետք է ներկայացնեն հետևյալ երկու փաստաթղթերը՝ անգլերենով.

- մանրամասն ինքնակենսագրություն (CV), Europass CV ձևաչափով,
- մոտիվացիոն նամակ (առավելագույնը 2 էջ):

Դիմումները պետք է ուղարկվեն neoarmenia@hesc.am էլ. հասցեին: Էլ. նամակի վերնագրի դաշում անհրաժեշտ է կատարել հետևյալ գրառումը. «Application – Coordinator NEO_Armenia»:

Դիմումների ընդունման վերջնաժամկետը՝ **3 հունիսի 2025 թվական, ժամը** 17:00 (Երևանի ժամանակով):

Վերոնշյալ պահանջի խախտման դեպքում հայտադիմումը քննության չի ենթարկվի:

Ընտրության կարգը.

Թեկնածուների ընտրությունը կիրականացվի Ընտրող հանձնաժողովի կողմից, որը կազմված է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ներկայացուցիչներից, հասարական և կրթական ոլորտի կազմակերպությունների և ԵՄ պատվիրակության ներկայացուցիչներից:

Ընտրությունը կկազմակերպվի հետեւյալ փուլերով.

1. Թեկնածուի հայտի տեխնիկական ստուգում.
2. Ընտրող հանձնաժողովը կուսումնասիրի ներկայացված պահանջները բավարարող թեկնածուների մոտիվացիոն նամակները և ինքնակենսագրականները, որոնց գնահատման արդյունքում կկազմի հաջորդ փուլին հրավիրվող թեկնածուների կարճ ցուցակը: Բոլոր թեկնածուները կտեղեկացվեն արդյունքների մասին: Միայն կարճ ցուցակում ընդգրկված թեկնածուները կհրավիրվեն գրավոր թեստավորման և հարցազրույցի փուլի:
3. Ընտրող հանձնաժողովը կարճ ցուցակում ընդգրկված անձանց հետ կանցկացնի գրավոր թեստ և հարցազրույց՝ գնահատելու թեկնածուի կարողությունները և հմտությունները, ոլորտի արդի խնդիրների իմացությունը, աշխատանքային պարտականությունները կատարելու մոտիվացիան: Հարցազրույցը կանցկացվի անգլերենով: Թեստի և հարցազրույցի անցկացման օրը կհայտարարվի լրացուցիչ:

Վերոնշյալ փուլի անցկացումից հետո Ընտրող հանձնաժողովը կառաջադրի մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված թեկնածուին:

Կարող է սահմանվել նաև թեկնածուների ռեզերվային ցուցակ:

Սույն հայտարարության հետ կապված հարցերով թեկնածուները որևէ պարագայում չպետք է ուղղակիորեն կամ անուղղակիորեն մոտենան Ընտրող հանձնաժողովի ներկայացուցիչներին: Պայմանագիրը կնքելու լիազորություն ունեցող մարմինն իրեն իրավունք է վերապահում որակազրկել ցանկացած թեկնածուի, որն անտեսում է այս հրահանգը:

Թեկնածուի ընտրության գործընթացում կկիրառվի հավասար հնարավորությունների սկզբունքը: Այնուամենայնիվ, շահերի բախումից խուսափելու համար Ընտրող հանձնաժողովի անդամը չի կարող գնահատել իր կազմակերպությունը ներկայացնող թեկնածուին:

Աշխատանքի պայմանները

Աշխատանքի մեկնարկի սկիզբ.

2025 թվականի հուլիս

Պայմանագրի տևողություն.

2026 թվականի դեկտեմբերի 30 /մինչև Ծրագրի 2025-2026 աշխատանքային ծրագրի ավարտը/

Վարձատրություն.

Վարձատրությունը մրցակցային է՝ հաշվի առնելով թեկնածուի ստաժը, փորձը և որակավորումները:

Աշխատանքային ծանրաբեռնվածություն.

Լրիվ ծանրաբեռնվածությամբ (100 %) աշխատանք է: Այս պաշտոնը համատեղելի չէ այլ աշխատանքների հետ:

Վայր.

Երևան, Հայաստան